



# ԲԱԶՄԱՎԷՊ

Ի ՏԱՐԻ, ԹԻԻ 10

1862

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1

ՀԱՅԱԴԻՐ

Ս. Սահակ Պարբեշ

(Նարունակութիւն և վերջ։)

Գրեթէ զրոյ թարգմանութեան սկիզբն և քահանայորհնէքի հրատարակման տարին (412) վախճանեցաւ բարեացապարտ թագաւորն մեր՝ Սաւրազ, որ Տրդատոյ մահունէն ետև կէս դարու մէջ եղած չըլլալու չարիքն և շփոթքը մնացուցեր էր իր 21 տարի խաղաղ և խոհեմ կառավարութիւն. իր մահն նորոգեց հին վէրքերը, որք՝ աւանդ, անբժշկելի մնացին։ Սաւրազ պուհ՝ իրեն ժառանգ տասը տարեկան տղեկ մը թողուց, Սարտաշէս անուամբ. աշխարհը մէկէն վերվար չըլլալու համար՝ փութացաւ զգաստ հովուապետն Ս. Սահակ, որ և յետ թագաւորին ազգապետ ճանաչուէր, զնացաւ Յազկերտ Ա և կերպով մը իր պատճառաւ զրկուած առաջին հայոց թագաւորին փոխարէն ընելով, խնդրեց որ նորէն

թագաւորեցնէ Սաւրազոյ եղբայրը, Խոսրովը, որ Մայուշ բերդին մէջ արգելած ծերացած՝ մահուանէ զատաւատութեան յոյս, և թերևս փափագ այլ չունէր։ Ս. Սահակայ շնորհքն միայն կրցաւ Պարսից անփոխելի օրէնքն փոխել, և ինչուան ՚ի մահ՝ ՚ի բանտ դատապարտեալը հանել ՚ի բանտէ, և հաւանեցնել զնա այլ՝ նորէն իր երկտասարդ գլխին կրած թագը՝ զնելու հիմա կորացեալ և այլորեալ գըլխին վրայ. որ և տարիէ մը աւելի չկրցաւ վերցնել զայն. տակայն զոնէ փառօք մեռաւ, և Ս. Սահակայ օրհնութեամբը իջաւ քնանալու թագաւորաց յետ հասարակաց քունը։ Ս. Սահակայ փափագն կատարեցաւ անոր թագաւորութեամբն, այլ կիսկատար մնաց կարճ թագաւորութեամբն. յետ որոյ

քանի մը տարի պարապ մնաց աթոռն, Լ՛րտաշխի տղայութեանն համար. և թէպէտ հասաւ նա յարբունս, բայց Յազկերտ իր որդին Շ ապուհը թագաւորեցուց Նայոց. որ և յետ չորս տարի անարգանօք թագաւորութեան՝ հօրը հիւանդութիւնը լսելով փութացաւ ՚ի Պարսկաստան անոր յաջորդելու. բայց մէկտեղ ՚ի գերեզման մտաւ, իրեններէն սպաննուելով. և թագաւորեց Պարսից՝ Ս աւամ Բ: Սա մէկէն Յունաց դէմ պատերազմ բացաւ (420), մեր աշխարհքն այլ նորէն ոտնակոխ եղաւ. և ահա այս շիութութեանս համար էր որ Ս. Սահակ անցաւ ՚ի բաժին Յունաց. և որովհետև Շ ապուհը թագաւորութեան ատեն մեռեր էր իր փեսայն Նամազասպ Սամիկոնեան ըստ պարապեան Նայոց, անոր որդին իր թուոր Սարգանը՝ զրկեց ընդ Ս. Ստրովպայ առ կայսրն Ռօնոզոս, և սքրտեալ պատուանուամբ հօրը տեղ իշխանութեան հասուց: Ընոր հետ Ռօնոզոս կայսր պատուէր զրկեց առ Ընատոլ՝ իր արևելից կողմնակալ զօրավարն, որ յապահովութիւն յունաբաժին Նայոց ամուր քաղաք մը շինէ, և շինեցաւ Վարնոյ քաղաքն (422): Ըստ պէս Յունաց կայսրն և անոր իշխանութեան տակ եղած արևմտեան Նայաստանը շահելով և յանձնելով ՚ի վարդապետութիւն Ս. Ստրովպայ, Ս. Սահակ ճարտար քաղաքագիտութիւն արևելեանն այլ չթողուց Պարսից թագաւորին վրէժխնդրութեանն. այլ զսպեան Սահակ և (յետոյ) զթոռն իւր Սարգան, երբ դարձաւ սա ՚ի Յունաց՝ զրկեց ՚ի դուռն թագաւորին հաշտութիւն խնդրելու. որովհետև Շ ապուհը երթալէն ետև՝ Նայք զլուխ քաշեր և վանտեր էին զՊարսիկ պաշտօնեայս. ասոնց պատգամաւորութիւնն բաւական չըլլալով, (ըստ սմանց)՝ ինքնին Ս. Սահակ՝ երբ

1. Ի պատմաց ոմանք զՎարդան միայն յիշեն զփուռած առ թագաւորն Պարսից. ոմանք զնա և զՍահակ սապետ. ոմանք այլ զԷդրարս Վարդանայ ընդ Ս. Սահակայ:

արևմտեան Նայոց եկեղեցական բաները կարգի դրաւ, երկու փոքր թուներուն հետ (Նամազասպայ և Նմայեկայ) գնաց ՚ի դուռն Ս աւամայ (422), և իր բնաձիր և աստուածատուր շնորհօքն՝ ոչ միայն թափեց թագաւորին զէնքերը, այլ և Ս աւամայհոյ որդին Լ՛րտաշխը թագաւորեցնել տուաւ և բերաւ կանգնեց իր հօրը աթոռը: Երկու տիրութեանց մէջ և այնպիսի վրտանգաւոր և խառնակ ժամանակ մը՝ այսպիսի խորագէտ և անխարդախ խաղ մը խաղալ և յաջողել՝ միայն սուրբն Սահակ կարող էր: Որքան անոր երախտագէտ և անձնատուր պէտք էր ըլլալ Նայաստան՝ իր թագաւորան և իշխանօքն և ամենայն ուխտիւ եկեղեցւոյն և ռամկայ: Սուսաւորէն սկսեալ իր յաջորդ հայրապետքն՝ շատ հեղայսպիսի բարիք և տիրութիւն ըրին իրենց որդիացեալ ազգին, բայց այն օրհնեալ և օրհնելի ազգին որդիքն՝ շատ պակաս և պարտական գտուեցան առ բարերարսն: Ըստ պէս այլ հիմա, նախ թագաւորն՝ անարժան որդի զգօն Ս աւամայհոյ, Պապայ և Ըրշակայ ճամբաները երթալով զզուեցուց նախարարները, արհամարհեց անոնց երեսդարձութիւնը, անսաստեց Ս. Սահակայ խրատուցը, միայն իր ծաղկեալ և հուժկու երիտասարդութեանը լսելով. նախարարք և իշխանք վեց տարիէ աւելի չկրցան համբերել (423-428) իրենց և իրենց կանանց եղած անարգութեանը, և միաբանեցան մերժելու զԼ՛րտաշխս ՚ի ձեռն Ս աւամայ Պարսից թագաւորի, և անոր դռնէն կողմնակալ կամ հարկաժողով մը գնել տալով իւրաքանչիւր իրենց տէրութիւնը և ազատութիւնը խաղաղութեամբ վարելու. և առ այս կու յորդորէին զՍ. կաթողիկոսն այլ: Ռօնոզոս մտածութիւննին բողորովին անիրաւ չէր, իրենց առջի կրածները յիշելով յանկարգ թագաւորայ, այլ զեռ շատ հեռու էր յու-

1. Յունաց հետ հաշտութեան միջոց մ'այլ և զաւ Ահակ եպիսկոպոսն Ամգայ, պարսիկ գերիները գնելով և ազատ տրձրկելով:

ղիղ և 'ի խոր տեսութենէ . մանաւանդ որ եղածէն աւելի սև կ'ուզէին ցուցնել զԱրտաշէս , և յիրաւի իրմէ սև ու աղտեղի թագաւորի մը մատնել իրենց զեղիս՝ բայց քրիստոնեայ թագաւորը . ինչպէս որ շատ պայծառ և գեղեցիկ խօսքերով բացատրեց այս բանը Ս . Սահակ , և երկար Զանաց հանդարտեցնելու զնախարարս : Բայց անոնց համբերութիւնն հատեր էր . և չուզելով ետ կենալ իրենց բռնած ճամբէն , չէին այլ կրնար ուրիշ անտեղի և վատ գործ մ'այլ չաւելցնել . այսինքն իրենց աշխարհական տիրոջ՝ թագաւորին հետ , դադրեցնել նաև հոգևոր տիրոջ՝ կաթողիկոսին իշխանութիւնն այլ վասն զի եթէ նա չմիաբաներ հետերնին՝ խօսքերնին առաջ չէր երթար . ապա պէտք էր զնա այլ յանցաւոր ցուցնել Պարսից թագաւորին դիմաց : ԲՏա հոս էր մեծագոյն փոսն , որոյ վերայէն չիկրցան ցատքել , ընկան մէջը , և ձգեցին իրենց տեարքը և բոլոր աշխարհքնին : Այլան գնացին Պարսից դուռը . Ս ռամ յօժարութեամբ լսեց անոնց ամբաստանութեանց և զրպարտութեանց . կանչեց 'ի դուռն զթագաւորն և զկաթողիկոս . թագաւորն արդարացուց զինքն , կաթողիկոսն այլ ցուցնելով թէ թագաւորին անքրիստոնեայ գործքերը՝ իր (Սահակայ) ատեանին մէջ դատելի է և ոչ Պարսից ատեանին մէջ դատապարտելի , անոր իրաւունքը պաշտպանեց . և հոս այլ երևցաւ Ս . Սահակայ մինակ մեծութիւնն՝ բոլոր բազմութեան իշխանաց պզտիկութեանը քով : Բարտաշէս իր ներքին խղճովը , նախարարք իրենց արտաքին խղճովը , Ս ռամ իր անխիղճ խղճովը մթնցած միգամած կորացած էին . միայն Ս . Սահակ սպիտակ և պայծառ սիւնացեալ ամպոյ պէս հոն կու բարձրանար : Պարսից թագաւորն առանձինն այլ յորդորելով զՍ . հայրապետն , և չկարենալով անոր բերնէն ամբաստանութիւն մը լսել , բաւական սեպեց նախարարաց ըսածն , և յանիրաւի դատապարտեց զԱրտաշէս , զրկելով

յաթոյ և յազատութենէ . նոյնպէս այլ ըրաւ կաթողիկոսին , դարձեալ նախարարաց լսելով՝ որք (ամօթով լսեմք) ամբաստանեցին զնա իբր Յունաց կուսակից , և փաստ բերին անոր գրած նամակները առ կայսրն և առ Բնատու , և զԱրդուն զրկելն առ նոսա : Ս . Սահակ այլ արգիլուեցաւ 'ի Պարսս , երեք չորս տարի : Հայոց թագաւորին տեղ Պարսիկ մարզպան մը զրկուեցաւ 'ի Հայս . իսկ այն սուրբ և մեծ կաթողիկոսին տեղ ո՞վ . — Ըարալեղու երէց , չերէց մը , Բրժկեցի Սորճահն , որ 'ի վարձս այնպիսի աստուածարեալ և պատկառելի անձի մը մատնութեան , անոր աթուր ժառանգեց , Հայոց քահանայապետ անուանեցաւ , գոնէ կաթողիկոսի արտաքին իշխանութիւնը բանեցնելու , որովհետեւ ինքն և ոչ եպիսկոպոս էր : Վարձաւ 'ի Հայս , իր սև անունը Ս . Սահակայ պայծառութեան մէջ բիծ ձգելու համար . բայց և ոչ տարի մը դիմանալով՝ նոյն իսկ իր գործակից և բանակից նախարարներէն վաճառուեցաւ . որք և ուրիշ կաթողիկոս մը ուզեցին 'ի Ս ռամայ . նա այլ Բրճիւր կամ Բարդիւր անուամբ Բորի մը խաւրեց , որ եկաւ տանտիկիներով լեցուց Հայոց հայրապետանոցը , զոր Ս . Սահակ իմաստուն վարդապետօք և թարգմանչօք և խարաղնազգեաց ձգնաւորօք զարդարեր էր . այն ատեն շատ լաւ իմացուեցաւ անոր արժէքը . և ոչ միայն աշխարհին մէջ , այլ և կայսեր քով և Ափեսոսի 250 հայրապետաց մէջ հարցուեցաւ փնտուռեցաւ Հայոց սուրբ հայրապետին վերադաս գահը . հայրասէր թարգմանիչքն մեր որ հոն գլուխուեցան՝ ցուցին հեռուէն Տիգրանի բանտը : Բյս անկարծելի յանդիմանութիւնն 'ի սիւնհոդոսի աշխարհագումար հայրապետաց , արդարև ծանր՝ այլ արժանի էր մեր կարճամիտ կամ կարճատես իշխանաց . որք աչքերնին աղէկ մը շփելով՝ յետ երեք տարուոյ մերժեցին զՏիգրանու այլ . և ոմանք լաւէլայն՝ ոմանք յայտնի Ս . Սերով

այս և բոլոր եկեղեցւոյ ուխտին հետ մէկտեղ նորէն զՍ) . Սահակ խնդրեցին յետ դարձնել . միայն ոմանք Պարսից թագաւորին կամացը թողուցին զիլ որ ուզէ խաւրելու . յունաբաժին հայք այլ ուրիշ մը առաջարկեցին . Սում թէ իր ուղածը և թէ անոնց ուղածը միաբանելու հնարք մը սեպեց՝ Շուէլ (Սամուէլ) անուամբ ասորի մը խաւրել փոխանակ Բրքիչոյ, կաթուղիկոսի արտաքին իշխանութիւն վարելու, և մարզդոանին օդնական ըլլալու, Ս) Սահակն այլ արձակել, որ Շմուէլի ընտրածները ձեռնադրէ յեպիսկոպոսութիւն, և հոգևորապէս հովուէ իր ժողովուրդը . և այսպէս յերկու բաժնելով կաթուղիկոսութեան իշխանութիւնը, և արտաքին հոգաբարձութիւնը վերցնելով ՚ի Սահակայ, անոր վիճակեալ ոռճիկն այլ պակսեցուց, այսինքն կաթուղիկոսին տրուած կալուածքներուն մեծ մասն առաւ, և քիչ գեղ ու ագարակ թողուց անոր . արձակելու ատենն այլ երգումն պահանջեց՝ որ հաւատարիմ կենայ իրեն, և չըմիտի Յունաց կողմը . ապա թէ ոչ բոլոր ազգին վրայ չարիք կու հասցընէ : Ըսն ատեն Ս) Սահակ որ կ'իմանար իր հարկաւորութիւնը ազգին համար, բայց չէր այլ կրնար յանձնառու երևել Սումայ ամէն հըրամայածին, իր արժէքը անգամ մ'այլ ցըցուց, և յետին անգամ Պարսից Գըրան առջև, յոտք կանգնելով բոլոր արքունի հանդիսին մէջ, և երկար ատենաբանութեամբ մէկիկ մէկիկ յառաջ բերաւ իր 40 տարիէ աւելի հաւատարիմ ծառայութիւնն և երախտիքն առ Գուռն Պարսից, և ՚ի Գրանէն անվարձ և աներախտ մնալն, Պարսից սուտ խոստմունքը և խարդախութիւնը, և անիրաւ դատաստանները, և իր քրիստոնէայ հաւատոց անհրաժարելի պարտքը՝ հաւատակցաց հետ (Յունաց և այլոց) հաղորդութիւն ընելու : Իւ այնքան տիրաբար ճարտասանութեամբ, այլ հանդարտ և վսեմ կերպով խօսեցաւ այն վսեմափայլ ութմանակայ արեւոյն, մինչև թագաւորն և իշխանքն

և մոգերն պապանձած իրար կու նայէին և չիկրցաւ մէկն պատասխան տալ . այլ յետոյ ինքնին թագաւորն հրամայեց իր մեծերուն, որ շատ գանձ ստակ տան մեր կաթուղիկոսին, այնպէս գեղեցիկ և անվախ համարձակ խօսելուն համար . որոյ համբան յետոյ մեր աշխարհն այլ հասնելով՝ այլ աւելի սիրելի ըրաւ իր ձերունի ամենաշնորհ հայրապետը : Իսկ ինքն ստակը մերժելով՝ տուողներուն աղաչեց որ անոր տեղ թագաւորէն խնդրեն ինչ որ ինքն երբեմն յԱրտաշէ խնդրէր էր, այսինքն նախարարաց իշխանութեան գահնամակը անփոփոխ հաստատել, և մասնաւորապէս Արշակունեաց խնամի եղող նախարարաց կալուածքները յետ դարձնել իրենց : Սում հոս այլ յաղթուեցաւ Սահակայ . ամէն խնդրածները կատարեց, և անոր թողը, Ս) Սարգանը՝ հաստատեց ՚ի պատիւ Սամիկոնէից տիրութեան և զօրավարութեան հայոց : Ըսպէս յետ երեք կամ չորս տարի արգելանաց դարձաւ Ս) Սահակ ՚ի հայո, և իր հին փառաւոր աթոռը Սաղարշապատը թողլով, նկատմամբ անարժան Շմուէլին, բայց յանձնելով զայն ՚ի հոգաբարձութիւն իր հոգեկցին Ս) Սեսրովսայ, ինքն ընտրեց իրեն կայանք հայոց մկրտարանը, Բագրևանդայ Ս) Յովհաննու ուխտատեղին . և երբեմն այլ անոր մօտ վիճակները պարտելով, հարազատ հովուի պէս կու խնամէր իր հեռացող և երբեմն մոլորեալ հօտը . և առաջուան պէս անխնայ քարոզէր և վարդապետէր : Ըստ ատեն միւթարութեւն ընդունեցաւ սուրբն Սահակ զԱզան Արծրունեաց հոգեւոր իշխանն ՚ի կրօնաւորական կեանս, ինչպէս 40 տարի առաջ այլ խնդրէր էր, բայց Ս) հայրապետն Պարսից թագաւորէն ահն ածելով չէր յանձն առած այն ատեն : Ս) Սահակայ արգելանաց ատեն Ափեսոսի ժողովն կատարուէր էր (431) . որոյ վեց կանոնները և ոմանց ՚ի հարց ժողովոյն առանձին թղթերը առ Ս) Սահակ

բերին 'ի Կոստանդնուպօլիս եղած  
 Թարգմանիչք մեր Ղ և ոնգ և Կորիւն,  
 Եզնիկ և Յովսէփ, ուրիշ սուրբ հարց  
 գործքերով, և գտան զՍ. Սահակ և  
 զՍ. Եսրովպ յԱշտիշատ Տարօնոյ. զորս  
 ընդունելով Ս. Սահակ՝ Ժողովական  
 ատենաբանութիւն՝ մը ըրաւ իր հաւա-  
 տարիմ եպիսկոպոսաց առջև, և հա-  
 ւանութեամբ նոցա և Ս. Ս. Եսրովպայ՝  
 պատասխան գրեց հայրապետաց. և սկը-  
 սան նոր բերած գրքերը Թարգմանել  
 և սուրբ գրոց Թարգմանութիւնը ուղ-  
 ղագրել: Ի այց Եփեսոսի ժողովին վը-  
 ճիւր չգագրեցուց 'ի Յոյնս՝ Եստորի  
 և իր հետևողաց վէճերը, այլ աւելի  
 զայրացաւ և ընդարձակեցաւ: Ուղղա-  
 փառ և այլափառ իրարու դէմ գրէին,  
 և օտարաց խաւրէին գրածնին, յորոց  
 շտք չկարենալով ընտրել զուղիղն և  
 զծուռն՝ շփոթէին. աւելի շփոթնողն  
 էր Եստորի վարժապետին Թէոդորի  
 Սոպուլեստացոյ գրուածքն, որք Լա-  
 թիոսի և Սահեգոնի և ուրիշ հերձուա-  
 ծոց դէմ՝ գրուած ըլլալով ուղղափառ  
 կ'երևային, բայց երևոյթին տակ ծած-  
 կած էր նեստորական թոյնն. սակայն  
 առջի բերան շատոնք իբրև ուղիղ ընդու-  
 նեցան. ինչպէս և Կիւրայ եպիսկոպոսն  
 Թէոդորետոս իմաստուն պատմիչն, որք  
 'ի հայս այլ խաւրեցին այն գրոց օրի-  
 նակները, և որպէս երևի՝ ոմանք 'ի մե-  
 րոցս այլ ընկալան, և բարեկամն Թէո-  
 դորետեայ մեր Եւլալ եպիսկոպոսն  
 Սարգազոյ (զոր յետոյ յիշէ Եզնիկ  
 'ի ժողովի Լորտաշատու) Թարգմանեց  
 զայն գրեանքն 'ի հայ: Ես բանիս կաս-  
 կածելով նախ Ս. Սահակայ մերձա-  
 ւոր աթուակիցքն Լիակ Սեւտենոյ ե-  
 պիսկոպոսն և երանելին Ռաբուլաս Ե-  
 դեսիոյ եպիսկոպոսն, գրով իմաց տուին  
 առ ծերունի հայրապետն մեր (յամի  
 434-5). որ և մէկէն քննել տուաւ ու

գտաւ. և Թէոդորոսի գրուածոց հետ  
 Ռաբուլայի և Լիակայ նամակն այլ  
 խաւրեց առ ծանօթն իւր Ս. Պրոկղ  
 Կոստանդնուպօլոյ հայրապետն, ձե-  
 ուամբ Ղ և ոնգի երիցու և Լաբայ կամ  
 Լաբելի, որպէս զի նա երկու կողմէն  
 գրուածներն այլ քննէ և իր դատաս-  
 տանը իմացնէ: Պրոկղ ուրախու-  
 թեամբ ընդունելով Ս. Սահակայ զըր-  
 կած նուիրակութիւնը, և անոր ծայ-  
 րագարգ հասակին, և թերևս հին ծա-  
 նօթութեան և դիպուածոց համեմատ,  
 ինքն որ դեռ նոր նստեր էր յաթոռ  
 (434), գորովելով և պատկառանօք,  
 իբրև իր վարդապետին (Սիկեբերանի)  
 ընկերակիցը տեսնելով՝ կու գրէր այս  
 նշանական խօսքերով սկսելով. «Ե-  
 ղրանի որ հանապազորդ լինիցին 'ի  
 ղաղցրահայեաց տեսիլ աստուածա-  
 ղեղ երեսացդ. և զիասեմ հանապազ-  
 այլ գոնեայ յաւուրս կամ յամիսս  
 կամ 'ի տարեկանս: Եսասցէ և իմ  
 անձն. Ո՞ առնէր զիս արժանի հա-  
 սանել անկանել յոտս աւետարա-  
 նիչս: Եւ ուստի ինձ այդ լինիցի,  
 բայց եթէ յաղօթից սրբոյդ, զոր մեծ  
 պատարագաւ միշտ 'ի վերայ արժա-  
 նաց և անարժանաց՝ ամենասուրբն  
 Եստուծոյ հատուցանես», Իսկ ինչն-  
 դրոյն վրայօք երկայն բացատրութիւն  
 մը գրեց. բայց նախ քան զղրկեն 'ի  
 հայս, խաւրեց առ անուանին Յովհան-  
 նէս Նստիոքայ հայրապետն, որ ինքն  
 այլ իր հաւանութիւնը և ստորագրու-  
 թիւնը տայ. նա այլ իր եպիսկոպոսաց  
 ժողովով ստորագրեց և գովութեամբ  
 դարձուց. նուիրակն տարաւ Թուղթը  
 առ մեծն Կիւրեղ Լոբքսանդրի հայ-  
 րապետն. նա այլ հաւանեցաւ և առան-  
 ձինն այլ գրեց թէ առ Ս. Պրոկղ և  
 թէ առ Ս. Սահակ ընդդէմ Թէոդորի  
 Սոպուլեստացոյ. այսպէս Պրոկղ  
 երկու պատրիարքաց վկայութեամբ  
 այլ հաստատելով գրածը՝ անկէ ետև  
 զրկեց 'ի հայս՝ (436). բայց իր նուի-

1. Այս ատենաբանութիւնը կու յիշուի մեր  
 հարց աստուածաբանական խնդրոց վկայութեանց  
 մէջ, 'ի Ճառնն որ յԱշտիշատի խօսեցաւ:  
 2. Մէկ գրուածն այլ էր ընդդէմ մոզութեան  
 Պարսից, և գրէր էր առ Ս. Ս. Եսրովպ, Թերևս ա-  
 սոր խնդրովը:

1. Այս Թուղթս գրուած կու սեպուի յամին  
 435. հարիւր տարի ետքը Դիոնեսիոս Փղբրիկն

րակն Ռասիլ՝ իր կողմանէ այլ բաներ աւելցուց ընդդէմ Թէոդորի, իր հայրապետին զրաժը բաւական չհամարելով: Այս Թղթոյն այլ միաբան պատասխան գրեց Ս. Սահակ ընդ Սալտոցի, և ապահովցուց որ Թէոդորի սերմունքը չկան հայոց մէջ. «Այլ որ», «Թիոդորեայ (Թէոդորի) Սամուէս», «տացւոյ աշակերտեալք իցեն, առ ժամանակս՝ ՚ի շնորհացն Ստուծոյ՝ այն», «պիսի ինչ չէ և յայտնեալ. ապա թէ», «իցէ ծածկեալ ՚ի ժանգոյ աղաւղու», «թեան, ՚ի հարկէ ջան լիցի մեզ խլել», «զխոջն և զգայթակղութիւնն զայն ՚ի», «միջոյ ՚ի բաց կորուսանել. զի միաբանութիւն՝ որպէս ՚ի ձերում միջի փառաբանի, և զմեզ ՚ի նմին հաւատարութեան փառաւորութիւն առ Ստուած հասուցանել արժանի արասցէ»: Այս Թուղթս՝ գրած է Ս. Սահակ հազիւ երկու կամ երեք տարի յառաջ քան իր մահը. այն միջոյին հանդիպեցաւ և մահ Շմուէլի, որ ազահութեամբն աւելի քան զՎրբիշոյ զգուելի եղած էր ամէնուն, բաց ՚ի Սուրմակայ: Հաւատարիմ նախարարք և եպիսկոպոսունք ազատելով այն անուանեալ քաղաքացի ասորի կաթողիկոսէն, Ս. Սահակայ ոտքն ընկան և լալով ներումն խնդրէին և օրերով կ'աղաչէին որ իր հօրը Ս. Վերսիսին պէս անյիշաչարութեամբ յանձն առնու նորէն իրենց կատարեալ կաթողիկոսութիւնը. բայց ամենայն ջանք և աղաչանք անօգուտ եղան. Ս. Սահակ

կամ Կարճիկն Թարգմաներ է ՚ի լատին լեզու. խորագիրն կամ հասցէն հայոց եպիսկոպոսաց, վարդապետաց և վանահարց ուղղուած է, Ս. Սահակայ անունը չկայ. հաւանօրէն, անոր զատ գրեր էր, եպիսկոպոսաց զատ. որպէս զի Պարսից Թագաւորին առջև յանցաւոր չսեպուի Ս. Սահակ՝ իրն ժողովով Յունաց հետ միաբանող:

1. Նսկէ զատ երկար Թուղթ մ'այլ գրած է Ս. Սահակ միաբանութեամբ ժողովոյ եպիսկոպոսաց և վանահարց, որուն միայն յունարէն բնագիրն կայ հիմա. այս Թուղթս կարգացուեցաւ Կոստանդնուպոլսոյ Բ. ժողովոյն (Ե. Թիեզերական) մէջ յամի 553, իբրև զօրաւոր և պայծառ գրուած մը ընդդէմ Նեստորի և Թէոդորոսի, անոնց ժամանակակից սուրբ և մեծ հայրապետէ մը: — Տես Պատմ. Հայ. Բ. 261:

ոչ յիշաչարութեամբ մերժեց, այլ արդէն լաւագոյն հանդերձեալ կենաց պատրաստութեան մէջ ըլլալով այն ծանրացեալ հասակին, միանգամայն և հին տեսիլքը միշտ աչացն առջև ըլլալով, յիսուն վաթսուն տարի զայն լուծեամբ պահելէն ետև, պատմեց իրեն աղաչողաց, թէ իր ցեղէն քահանայապետութեանը դադրիլն և թէ իր եկեղեցւոյն հանդերձեալ հալածանքը և վրտանգը: Սոր լսելով ամէնքն զարհուրեցան, ափշեցան, ափ ՚ի բերան եղան, և ահամայ իրաւունք տուին այն մեծ սրտակտուր անձին՝ որ կ'ըսէր. «Այլ թայք յինէն ՚ի բաց և թոյլ տուք ինձ որդեալ զընդհանուր կորուստ աշխարհիս հայոց. զոր տեսանեմ աչօք մը տացս ՚ի զօրութենէ վերին ցուցակութեանն. մի բունադատէք միսթաբել զիս ՚ի վերայ բեկման ժողովրդեան իմոյ»: Այլան կորակոր, ՚ի բաց գնացին լուռմուռ, և անկէ ետև ոչ ոք համարձակեցաւ այն խնդրոյն վրայ բան մը խօսիլ՝ այն վսեմ ցաւով կրնքուած սրտին հետ, որուն բռնի հնչած հառաչանքն այլ հիմա շատ ազգու կուգար նախարարաց ակրնջին, քան անկէ տասն տարի առաջ երկայն յորդորանքն զիրենք կրկին տիրամասնութենէ յետ կեցընելու համար: Իր լուսաւորչական դահը իշխանական փառօք դառնալէն աւելի՝ միսթարութիւն եղաւ իրեն կենաց վերջնութեւ տարին՝ (438), իր մեծ աթուակցին, Ս. Սսկեբերանի մարմնոյն դարձն ՚ի Կոստանդնուպոլսու որուն մահը, աքսորանքը, և եպիսկոպոս նստիլն տեսեր էր Ս. Սահակ իր կաթողիկոսական աթուակէն: Իսկ հիմա այն աթուակոյն աստիճանաց վրայ նստած՝ և նկատելով ՚ի գերեզմանն, «յայնմ հետէ ամիսիեալ զինքն յամենայն աշխարհածուփ զբօսանաց, աղօթից միայն պարապէր և վարդապետութեան»:

Հոս պէտք է յիշել Ս. Սահակայ վարուց սրբապոյն նրբագոյն կերպա-

րանքն այլ, աստուածային համակա-  
մութիւնն, կամ ներքին կենսակցու-  
թիւնն ընդ Աստուծոյ. յորում այնքան  
զերազանց էր քան իր սուրբ նախնիքն  
անգամ, մինչև անաչառ պատմիչն՝ հա-  
մարձակ վկայէ թէ, « Սա ամենայն ա-  
ռաքինութեանց հարցն նմանեալ, ա-  
ղօթիցն մասամբ առաւելեաց: Վան-  
զի ստացաւ աշակերտս 60, արք կրօ-  
նաւորք, խարանազգեստք, երկաթա-  
պատք, բոկազնացք, յար ընդ նմա  
չըջէին. որովք՝ մշտնջենաւոր պաշ-  
տամամբ կապարէր զհանոնն՝ որպէս զայն՝  
որ յանապատան էն. եւ հոգայր զաշխարհս,  
որպէս զայն՝ որ յաշխարհի էն: Այս  
երկու աննման հարկաւոր հոգերը բու-  
լոր կենացը մէջ այնպէս միացուցեր էր  
Ս. Սահակ, որ երկու անձ կար-  
ծուէր մի և նոյն կերպարանօք, մէկն  
յաշխարհի և յարքունիս՝ զընկերս և  
զազգ հոգալով, միւսն յանապատի և  
յառանձնութեան՝ զհոգին իւր և զ՝ը-  
տուած: Այսպէս կ'ընէր կաթողիկո-  
սութեանէն առաջ, այսպէս կաթողիկո-  
սութեան ատեն, և այսպէս իր կենաց  
վերջերն այլ. և թէ և հիմա բոլորովին  
առանձնանալ փափագէր, այլ « Ռա-  
զումք յետիսկոպոսաց և յայլոց պա-  
տուական քահանայից՝ ոչ երբէք ժու-  
թէին տեւել և մեկուսանալ ՚ի մըջ  
տաբուղիս ազգերէ վարդապետու-  
թեան սրբոյն, ուր ուրեք և դիպէր, ՚ի  
յոստանի և կամ ՚ի հոլս՝: Յետին  
անգամ ՚ի հոլ ելեր էր յամարան 439  
տարւոյ, երբ յետ մահուն Ս. Ռամայ՝  
անոր յաջորդ որդւոյն, Յազկերտի,  
զորքն եկան ՚ի Ռազուան, ինչպէս տե-  
սանք ՚ի սկզբան. և ահա այս անժամ  
ու անպատշաճ շփոթութեան պէտք  
էր հեռացնել այն ՚ի մահ և յանմահու-  
թիւն հասունացեալ հայրապետը, որ  
արդէն յետին հիւանդութեամբ մօտ  
էր իջնելու յանկողնէն ՚ի գերեզման:  
Հայրասէր հաւատարիմ ձեռասունքն  
աւելի գրկօք քան պատգարակօք վե-  
րուցին ժամանակին հայրապետաց նա-

1. Խորենացի:  
2. Ղազար Փարպեցի:

հապետը, և Ս. Ռազուորչայ յետին պայ-  
ազատը. տարին քանի մը ժամ հե-  
ռու՝ Ղազկերտի Բլուր կամ Բլուրոյաց  
ըտուած գիւղը. որ ապահով և ճամբէ  
հեռու տեղ մ'էր, զոր դժբաղդու-  
թիւն ես շատ փնտուեր և չեմ տեսած:  
Հոն հիւանդութիւնն ծանրանալով,  
իմաց տրուեցաւ ծանօթիցը. հաւանօ-  
րէն պատերազմի պատճառաւ Ս. Ս. ար-  
դան հեռացեր էր. բայց իր կիներն Ղըս-  
տրիկ՝ և մէկ այլ եղբարքն և մերձա-  
ւորք՝ եկան իրենց պապուն և ամենայն  
հայոց հօրն քով. որ և իր համանուն  
համահոգի Սահակ նահապետին նը-  
ման՝ կաթնելով մահուան բարձին, աշ-  
խարհական և հոգեկան կտակներն ը-  
րաւ. բաժնեց անոնց իրմէ կողոպտուած  
ստացուածոց մնացորդը. բայց առատա-  
պէս տուաւ իր անկողոպտելի ստա-  
ցուածքը. այսինքն «ամբարձեալ զձեռս  
իւր օրհնեաց զնոսա օրհնութեամբ Բազ-  
մա. և պատուիրեաց նոցա պահել  
զվարդապետութիւն պատուիրանի  
սրբոյն Վրիգորի, զոր ուսոյց և ա-  
ւանդեաց ճշմարտութեամբ ամենայն  
աշխարհիս հայոց՝: Օնոյն պա-  
տուէր և օրհնութիւն տալով իր հա-  
ւատարիմ ձեռնասուն հոգեսուն աշա-  
կերտացն, ապա բոլորովին ամփոփեց  
զինքն յինքեան. և թերևս իբրև յե-  
տին բարով մնաս ըսելով աշխարհիս՝  
անցուց անգամ մ'այլ մտքէն ընդար-  
ձակ նկարի մը պէս՝ իննսնամեայ կե-  
նաց բազմակերպ տեսարանները և փո-  
փոխութիւնները, քսանէն աւելի թա-  
գաւորաց յաջորդութիւնները՝ զոր տե-  
սեր էր երեք տերութեանց մէջ, հա-  
յոց, հունաց և Պարսից, որոց շատին  
հետ տեսութիւն և զրոյց այլ ունեցեր  
էր. — իր աշխարհին կերպ կերպ և  
շատը ողբալի դիպուածները, (Տիրա-  
նայ կուրութեանէն ինչուան Ղրտաշիսի  
աքսորը). — և սա աւաւել եկեղեցւոյն  
անցքը, իր մեծ պապուն՝ Յուսկան՝  
բրածեծ մահուընէն մինչև ՚ի մահ իր  
անարժան աթոռակցին՝ Շմուէլի. ուս-  
կից փոխելով յիշատակը՝ անցուց առ-

1. Ղազար Փարպեցի:

Ջւէն երկայն սուրբ շար մը իր հովուա-  
կից հայրապետաց զորս դար և կէս  
ժամանակ<sup>1</sup> սնուցեր և իրեն ծանուցեր  
էր, և որոյ ետեւէն ահա կ'երթար ինքն  
այլ, յետ շատերէն երկար՝ կէս դար  
հովուութե և բազմութիւ վաստակոց  
և վշտաց, առ հովուապետն և վարձա-  
հատոցն ամենեցուն, Վրիտոս. որոյ  
յանձնելով զազգն և զեկեղեցին, զե-  
րախտաւորս և զապերախտս, և ապա  
իր 'ի մանկութենէ առ նա փափագած  
և կարօտած հոգին՝ փոխեցաւ « Սա-  
ղաղական հանգստիւ<sup>2</sup>, » 'ի կենաց  
աշխարհիս՝ 'ի կեանս արքայութեանն  
երկնից. յետին սեպտեմբերի 439  
տարւոյն, յօր հինգշաբթի, յերկրորդ  
կամ յերրորդ ժամուն « Ս պաշտաման  
անուշահոտ իւղոյն<sup>3</sup>, » մեծն այն անձն,  
« Արմահանացու ծնեալ, անմահ զիւրն  
յիշատակ եթող. պատուեաց զպատ-  
կերն, պատկառեաց 'ի կոչնականէն,  
փոխանորդեաց զկեանսն. և այսքան  
կենցաղավարեաց՝ իբր զի ոչ պակա-  
սութեան իրիք մասն 'ի ծերութենէն  
եղանիլ, և ոչ յախտից առ ընդու-  
նել<sup>4</sup>, » . . . . Հանգիստ ուլ Սեծ, քու  
տրբանեալ մարմնոյդ յերկրի, և փառք  
պայծառ հոգւոյդ՝ յերկինս: Բայց ինչ  
ըսեմք քու հաւատարմացդ, քու անմի-  
թար որբոցդ, քու կարօտեալ աշակեր-  
տացդ, որք յետ երկար ժամանակաց  
և աշխարհէ աշխարհ պանդխտու-  
թեանց՝ կու գիմէին յՂեքսանդրիոյ  
և 'ի Բիզանդիոյ, յԹեանայ և 'ի  
Հռովմայ՝ քու և քու հոգեկցիդ (Սեւ-  
րովպայ) ամէնընկալ՝ հայրադորով զըր-  
կացդ, յուսալով հարսանեաց պարովք  
և առագաստի երգովք զիմաց ելնել,  
և ութ կամ տասն տարուան մտաւոր  
աշխատանաց պտուղն ընծայել: Իսկ  
հիմա « Ուր է քաղցր աչացն հան-

», դարտութիւն առ ուղիղս, և ահառ.  
», րութիւն՝ առ թիւրս. ուր զուարթ  
», շրթանցն ժպտումն առ բարի աչա-  
», կերտացն հանդիպումն. ուր խնդամիտ  
», սիրտն՝ ընդունող արբանեկաց. ուր  
», երկայն ճանապարհաց յոյս հեշտա-  
», ցուցիչ, աշխատութեանցն հանգու-  
», ցող: — Արեալ ժողովօղն, թաւա-  
», նաւահանգիստն, ելիք օգնականն,  
», լեաց ձայնն յորդորեցուցիչ<sup>1</sup>, »: Եւս  
խօսքերս եթէ նախ Այորենացոյ մը  
զրէն լսած ես, հայկակ, գիտցիր որ  
կրքերն շատերուն են, իմն այլ են. որ  
այն ատեն և այնկէ ետե եղածներն  
այլ նկատելով, աւելի անորման « Հա-  
», ռաչումն յիս 'ի ներքս ընթանայ և  
», արտօսը, և կամեցուցանէ բարբառել  
», բան տխրական և սգաւոր, » քան թէ  
փափագ գայ Ս. Սահակայ վրայ « Հրա-  
», շափառագունիւ անցանել բանիւ ըստ  
», արժանի սուրբ հօրն դրուատից<sup>2</sup>, »:  
Սակայն դարձեալ նոյն ազնուասիրտ  
աշակերտին և պատմին հետ « այլում  
», տեղոյ և ժամանակի զայստսիկ թող-  
», ցուք, » և երթանք մենք այլ 1422  
տարեկան քայլերով հեռուէն՝ ընկերե-  
լու այն լուրջ յուզարկաւորաց հետ,  
որոց աշխարհական պարագլուխն է մե-  
ծին Արդանայ կինն, սևաքողեալ  
սիբիլայի պէս, և եկեղեցականաց՝ ե-  
բեֆա երէցն, սարկաւազապետ Արբոյն,  
հանդերձ բազմութեամբ աշակերտացն  
և խարաղնազգեաց միաբանից, քահա-  
նայից, ազատ և ռամիկ մարդկան աշ-  
խարհախումբ հանդիսի. որք լեռնէ լեռ  
ձորէ ձոր անցնելով, և Լրածանոյ հա-  
ռաչածայն կարկաշտանաց քարավազ  
ճամբան բռնելով՝ կ'իջնեն 'ի Տարօն  
գաւառ, և կու դադրին անոր հիւսի-  
սակողմը պարսպող լեռանց ստորոտը՝  
սարատափի մը վրայ, ուր է հանգուցե-  
լոյն սեփական կալուածն, և բուն հին  
զոհից տեղն՝ Յաղփիշափ գեղն. հոն այն  
աստուածաման հոգւոյն անարատ պա-  
հարանը՝ պարկեշտ մարմինը՝ կ'ամիս-  
փեն պատուական տապանի մէջ. որոյ

1. Ս. Աթանասի ծննդենէն՝ յամի 296, ցմահ  
Ս. Սահակայ, 439 գրեթէ դար և կէս է:  
2. Ղազար Փարպեցի:  
3. Ինչ է այդ անուշահոտ իւղն, որոյ պաշտա-  
ման ատեն վախճանեցաւ Ս. Սահակ, ըստ պատ-  
մելոյ Այրեան. հաւանօրէն հիւանդաց օժման իւղն  
և ատենն:  
4. Խորենացի:

վրայ յետոյ կու շինեն այնպիսոյն ար-  
 ժանաւոր՝ « Եկեղեցի մեծապայծառ և  
 ,, վկայարան սրբոյն պատուական և մե-  
 ,, ծագին սպասուք ,, . անոր այլ բոլոր-  
 տիքը « Հիմնացուցեալ կանգնեցին 'ի  
 ,, տեղւոջն վանս բազմութեան պաշտօ-  
 ,, նէիցն կարգեալ դարմանս անպակաս  
 ,, պտղոց 'ի հանգիստ առաւելեալ եղ-  
 ,, բայրութեանն<sup>1</sup> ,, . ուր ժողովեցան իր  
 ճգնազգեցիկ աշկերտներէն ոմանք, ու  
 մանք այլ ուրիշ տեղեր ցրուած վան-  
 քեր հաստատեցին : Իսկ հաւատարիմ  
 երախտագէտ սիրելիք սրբոյն՝ Լճտի-  
 շատայ եկեղեցին և վանքն այլ բաւա-  
 կան չսեպելով, « Ետովս տարևորա-  
 ,, կանս աշխարհայորդոր բազմութեամբ  
 ,, հաստատեցին 'ի տեղւոջն . որ ըստ  
 ,, ժամանակի՝ բաղմամբօս ժողովրդօք՝  
 ,, կամաւոր յօժարութեամբ ազատք և  
 ,, քահանայք գաւառին, այլ և կարի  
 ,, յոյժ հեռաւոր տեղեաց զիմեալք  
 ,, յօր կարգադրութեան նորա տօնեն .  
 ,, որ և բազում օգնութիւնս առողջու-  
 ,, թեան ըստ իւրաքանչիւր ախտից շա-  
 ,, հին 'ի նշխարաց սրբոյն, և ուրախա-  
 ,, լից սրտիւ դառնան<sup>2</sup> ,, : — Երջանիկ  
 հայրապետ և յայսմ մասին, որ Վար-  
 դանայ պէս թոռն ունեցաւ, և Վամի-  
 կոնէից նման բարեպաշտ և տաքսիրտ  
 ազգականներ, որք կրցան ուրիշ նա-  
 խարարաց ապերախտութեան փոխա-  
 ըն՝ մեծագործ սուրբ յիշատակարան  
 մը, հոյակապ տաճար մը կանգնել, ի-  
 րենց նահապետին նշխարաց վրայ . և  
 այնքան արժանապէս մեծ ու փառա-  
 հեղ էր այս տաճարս, որ երբ լման  
 200 տարի ետև (639) մոլէնախանձ  
 Լքաբացիք առաջին անգամ մտան 'ի  
 հայաստան, հասարակ եկեղեցեաց  
 խնայելով՝ ամենէն աչքի զարնողները  
 փլուցին . որոց մէջ չորս հատն յանուա-  
 նէ յիշատակի, և առաջինն է սա :  
 Յայտնի է որ յետոյ դարձեալ շինեցաւ  
 վայելչապէս . զայն այլ քակեց, կ'ըսեն,  
 գաղանասիրտն Լէնկթիմուր, և անոր  
 քարերով Լքածանուոյ Սուլուխ գիւ-

1 — 2. Ղազար Փարպեցի :

ղին քով կամուրջ կապեց . բայց մինչև  
 հիմա կու տեսնուին աւերակք հին ե-  
 կեղեցւոյն, նշանք մամիկոնեան մեծա-  
 գործութեան . որոց մէջ փոքրիկ, պարզ,  
 ու կէս գետնաթաղ շէն մատուռ մը՝ 14  
 դարէ վեր կու ծածկէ զգերեզման մեծիկ  
 Սահակայ . անոր զիմաց զրուած է պատ-  
 շաճապէս՝ իր յետին հոգեկիր և ա-  
 րենակիր շառաւիղն, շուշանագեղ և  
 Շոշան-անուն թոռնեայն, Վարդէնի՝  
 դուստրն Վարդանայ մեծի . անոնց տօ-  
 նին յիշատակին մինչև ցայսօր յուխտ  
 երթան խոնարհ տեղացիք, կարծեմ  
 թէ և Վուրդք անգամ, փոխանակ  
 այնքան հեռաւոր և մերձաւոր ազգայ-  
 նոց, որոց պարտ և պատշաճ էր ոչ  
 միայն նորէն կանգնել վայելուչ եկեղե-  
 ցին, այլ եթէ աւելի առատութիւն և  
 ազատամտութի բանեցնէին, բլրաչափ  
 բուրգ մ'այլ բարձրացնել 'ի յիշատակ  
 աննման հայրապետին մերոյ և ամենայն  
 հայրապետաց արժանաւոր օրինակին,  
 և այն բրգան չորս երեսաց վրայ կուել  
 գրել իրանշան քանդակներով՝ իր վա-  
 րուց չորս սքանչելի կերպարանք . ա-  
 ռաջնոյն վրայ գրել ՀԱՅՐԵՆԱՍԻՐ  
 ԱՇԽԱՐՀԱԿԵՑՈՅՑ, զրուագելով եր-  
 կու անգամ իր ազգին թագաւոր կանգ-  
 նելը, և երկու անգամ անոր ազնուա-  
 կանութեան գահնամակը նորոգելը .  
 մէկ մը՝ Պարսից դուռը, մէկ մը նա-  
 խարարաց ժողովին մէջ իրաւաբանեն,  
 և այլն . — երկրորդ երեսին վրայ գրել  
 ՈՒՍՈՒՄՆԱՑՈՒՐ ԲԱՆԱՍԻՐ, և շարել  
 իր շարականները, թարգմանութիւն-  
 ները, նախագասելով աստուածաշուն-  
 չը, Ս. Ստրովպայ ձեռք տալը, դպրո-  
 ցաց բացումը ընդ բոլոր հայաստան,  
 Վրաստան, Լքուանստան, և թարգ-  
 մանչաց առաքումը յԵրրիս, յԱդիպ-  
 տոս, 'ի Յունաստան և յԻտալիա . —  
 երրորդին վրայ գրել ԵԿԵՂԵՑԱԶԱՐԴ  
 ՀԱՅՐԱՊԵՏ, և զրուագել իր դուժա-  
 րած ժողովքները, զրած կանոնները,  
 զրած և հաստատած եկեղեցական զբը-  
 քերը, հայրապետաց հետ թղթա-  
 կցութիւնը, հերձուածները հարածելը .  
 — չորրորդին վրայ գրել ԵՐԿՆԱԿԵՆ

ՅԱՂ ՍՐԲԱՍՈՒՆ . նշանակելով իր նուիրական, ճգնազգեցիկ կեանքը և կենաց յետին ժամը : Իսկ քառակուսի բրգան ծայրն ալ քիչ մը տաշելով տնկել ՚ի գազաթը երկնաալաց սպիտակ սրտաձև սափոր մը ոսկի բոցով և ոսկի դծով նշանուած , զոր փափաքէի Հայկակ , որ թէ ոչ այնքան մեծ , գոնէ այնքան փայլուն ըլլար՝ մինչև ուր որ ըլլայինք՝ կարենայինք տեսնել զայն և կարդալ ՍԱՀԱԿ :

Հ . Ղ . Մ . Ա .

**Շնիկ աստեղն ընկերը :**

Երկնից երեսն աստղ մը կայ քան զամէնը գեղեցիկ , աստղ մը որ քան զամէնն աւելի իրեն կը ձգէ մեր աչքն իր լուսոյն պայծառութեանն ու շնորհափայլութեանն համար որով զարդարուած է , և որ այս օրերս մտադիր դիտողութեանց ու խորին մտածութեանց առարկայ եղած է աստեղաբաշխից :

Եյս աստղն , որ Սիրիոս կամ Շնիկ անուամբ ամէնքն ալ կը ճանչնան , այնչափ հեռաւորութիւն ունի մեզմէ , որ մէկ միլիոն երեք հարիւր եօթանասունուիրեք անգամ աւելի է քան զայն որ կը բաժնէ մեզմէ զարևն . և որուն լոյսն իւրաքանչիւր վայրկենի մէջ ընթանալով իբր տասն միլիոն աշխարհագրական մղոն՝ քսանուերկու տարի կ'ուզէ իրմէ մինչև մեզի հասնելու : Եւ սակայն այսպիսի մէկ անհուն հեռաւորութիւն մը , որ գոզցես մարդուս միտքը կ'ահացունէ , աստեղաբաշխը իրենց զօրաւոր դիտակներովը կտրեցին անցան , և այն անհնութեան խորէն այնպիսի գաղտնիք մը խլեցին ու դուրս հանեցին , որ կը կարծուէր թէ յաւիտեան անծանօթ պիտի մնար :

Եհաւաստիկ ինչէն սկիզբն առին դիտողութիւնքն : “Երբ քննելու հետ

էր , կը գրէր անցեալները Ելվեռիէ աստեղաբաշխն առ պաշտօնեայն Վաղղիոյ հասարակաց ուսման , Շնիկ աստեղ գարու մը ընթացից մէջ եղած բաղդատական դիտողութիւնները Յըլուն , Հայկին և Երկաւորին համաստեղութեանց աստղերուն հետ . Պէսէլ՝ այս աստեղ վրայ կը նշանակէր շարժումն մը մասնաւոր ճօճման , և շատ որոշ . անբացատրելի երևոյթ մըն է այս , եթէ չենթադրուի թէ Շնիկ աստղն ենթակայ ըլլայ մեծագանդուած մարմնոյ մը ազդեցութեանն՝ որուն հետ կապեր են զինքն տիեզերական ձգողութեան օրէնքն : Երբ այս ենթադրութիւնս այնպէս ճիշդ կը բացատրէ այն երևութիւն ամէն պարագաներն , որ մենք չենք կրնար չհաւատալ թէ այս չըլլայ ճշմարտին բացատրութիւնը : Եթէ մինչև ցարդ չկրցանք տակաւին գտնել Շնիկ աստեղ այս խորհրդաւոր ընկերը , պատճառն այս է որ անիկայ երկրորդ արև մը չկազմեր ինքնալոյս , ինչպէս են կրկնակ աստեղաց դրութիւնները , այլ է Շնիկ արևուն մեծազանգուած մոլորակ մը . որուն փոխ առած լոյսը տկար ըլլալով՝ չկրնար կտրել անյնիլ այն անհուն հեռաւորութիւնն ու գալ մինչև մեր աչքն հասնիլ : Եր տեսաբանական գործիները կատարելագործուելով գուցէ օր մը տեսնենք զայն . բայց թէ և չհասնինք ալ գտնելու զայն , ժամանակաւ պիտի որոշենք իրեն կտրած պարունակը , պիտի ճշդենք զանգուածն , ինչպէս նաև ներքին աստեղ զանգուածն , որուն չորս դին կը դառնայ ,” :

Ելվեռիէի այս խօսքէն կը տեսնուի որ Շնիկ աստղը մեծ մտադրութեան նիւթ եղեր է աստեղաբաշխից , բայց ուրիշ կողմանէ ալ անոր գաղտնիքը փարատելու համար , որով պատած են իր շարժմունքն , հարկ է դիտողութեան գործիներն այն աստիճանի կատարելութեան հասցունել , որ ալ փափաքելու տեղի չմնայ :

Երբ պէտք է գիտնալ որ , ըստ կարծեաց Պէսէլի , Շնիկ աստեղ յատուկ